

գործարարության տարբեր տեսակների զարգացման համար: Մասնավորապես խոսքը վերաբերում է ազդոգբոսաշրջությանը, ինչը տեղում կնպաստի էկոնոմիկայի զարգացմանն ու զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Միաժամանակ, առանձնակի ընդգծվում է գյուղական կոոպերատիվների հիմնման անհրաժեշտությունը: Թեպետ, նորաստեղծ կոոպերատիվների համար մշակված են այլ ծրագրեր: Նրանց համար Եվրամիության ծրագրով հատկացվում է լրացուցիչ ֆինանսավորում եւ դրա անդամների համար կազմակերպվում են հատուկ դասընթացներ:

Մասնավորապես, ազդարարություններից բացի, գրանտներ կտրվեն գյուղում գործարարության տարբեր տեսակների զարգացման համար: Մասնավորապես խոսքը վերաբերում է ազդոգբոսաշրջությանը, ինչը տեղում կնպաստի էկոնոմիկայի զարգացմանն ու զբաղվածության մակարդակի բարձրացմանը: Միաժամանակ, առանձնակի ընդգծվում է գյուղական կոոպերատիվների հիմնման անհրաժեշտությունը: Թեպետ, նորաստեղծ կոոպերատիվների համար մշակված են այլ ծրագրեր: Նրանց համար Եվրամիության ծրագրով հատկացվում է լրացուցիչ ֆինանսավորում եւ դրա անդամների համար կազմակերպվում են հատուկ դասընթացներ:

Հիշեցնենք, որ Եվրոպայի հարեւանության ծրագրի՝ «Գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման համար» (ENPARD) նախագիծը մեկնարկել է անցյալ տարի եւ ուղղված է Վրաստանում պարենի արտադրության աճին եւ գյուղում աղքատության նվազեցմանը: Նախագիծը ծրագրված է երեք տարի ժամկետով եւ այն իրականացնում է Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը՝ ճյուղային մյուս նախարարությունների եւ գյուղատնտեսական սպասարկման կենտրոնների հետ: ENPARD-ի Վրաստան նախագծի հնարավոր արդյունքներն են փոքր ֆերմերների միջեւ համագործակցության խորացումը, գյուղատնտեսության ոլորտում ներգրավված կազմակերպությունների գործառույթների բարելավումը, աջակցությունը գյուղատնտեսության ազգային ռազմավարության իրականացմանը: Նախագծի բյուջեն կազմում է 40 միլիոն Եվրո, որը ներառում է բյուջետային նպաստները, գրանտները, Վրաստանի կառավարությանը հատկացվող տեխնիկական օգնությունը, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների համաֆինանսավորմամբ նոր նախագծերի իրականացումը:

Հատկանշական է, որ Եվրամիության նոր նախագիծը գլխավորապես ուղղված է աղքատության շեմի նվազեցմանը: Դրանով է պայմանավորված նախագծի գործունեության շրջանակների ընդլայնումը եւ դրանում նոր բաղադրիչների ներառումը: Ներկայումս ծրագիրն ուղղված է ոչ միայն գյուղատնտեսական գործարարության զարգացմանը, այլեւ՝ գործարարության մյուս տեսակների հիմնմանը, ինչը կնպաստի Վրաստանի, մասնավորապես գյուղական էկոնոմիկայի զարգացմանը: Ինչպես հայտնի է, երկրի բնակչության կեսից ավելին ապրում է գյուղերում: Ագրարային երկիր լինելով հանդերձ, Վրաստանի ՀՆԱ-ում գյուղատնտեսական արտադրանքը կազմում է ընդամենը 8 տոկոս: Հենց դրանով է պայմանավորված այն փաստը, որ Եվրամիությունը ներկայումս զարկ է տալիս գյուղում գործարարության մյուս տեսակների զարգացմանը, ինչը հեռանկարային է եւ առաջիկայում լուրջ ազդեցություն կգործի տնտեսական առաջընթացի վրա: